

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 05

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

գիտական խորհրդի 11.12.2020թ. նիստի

Գիտական խորհրդի արտահերթ նիստը կայացավ հեռահար կապի միջոցով: Հաղորդագրություններ են ուղարկվել գիտական խորհրդի 37 (երեսունյոթ) անդամներին:

Գիտական խորհրդի արտահերթ նիստը կազմակերպելու համար ՇՊՀ ռեկտորի ԺՊ Եր. Սերոբյանի կողմից նրանց էր ուղղվել հետևյալ նամակը.

ՇՊՀ Գիտական խորհրդի հարգելի անդամներ,

Գիտխորհրդի թվով 18 անդամների առաջարկով գիտխորհրդի արտահերթ նիստը, որը կայանալու էր ս.թ. դեկտեմբերի 11-ին ժամը 15.00-ին՝ քվորումի բացակայության պատճառով հետաձգվել է՝ համաձայն ՇՊՀ գիտխորհրդի կանոնակարգի 4.6 կետի:

Առաջնորդվելով ՇՊՀ գիտխորհրդի կանոնակարգի 4.7 կետով՝ ս.թ. դեկտեմբերի 18-ին ժամը 15.00-ին հրավիրվում է ՇՊՀ գիտխորհրդի արտահերթ նիստ՝ նախաձեռնող խմբի կողմից առաջարկվող նույն օրակարգով.


1. 2020թ. սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի և Թուրքիայի սանձազերծած պատերազմի արդյունքում Հայաստանի Հանրապետությունում և Արցախում ստեղծված իրավիճակի վերլուծություն:
2. Նոյեմբերի 9-ին Ադրբեջանի, Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև կնքված խայտառակ հայտարարության նկատմամբ կոշտ դիրքորոշման ամրագրում հայ ժողովրդի արժանապատվության նվաստացման, պետականության վտանգման, Արցախի Հանրապետության տարածքային կորուստների, ինքնիշխանության լրջագույն սահմանափակումների, հայկական զույգ պետություններում և Սփյուռքում ձևավորված բարոյահոգեբանական բարդ ու ծանր մթնոլորտի համատեքստում:
3. Հասարակությանն ու իշխանություններին ուղղված կոչ-հայտարարության ձևակերպում և հրապարակում՝ ստեղծված իրավիճակում ՀՀ կառավարության հետագա պաշտոնավարման անարդյունավետության և վարչապետի գլխավորությամբ կառավարության հրաժարականի մասին:
4. Առողջ համագործակցության քարտեզագրում հասարակության բոլոր շերտերի պրոֆեսիոնալ և կարող ուժերի, պետական կառույցների հետ՝ հանուն գերակա շահի՝ Հայաստանի և Արցախի Հանրապետությունների:

5. Քվորում չլինելու պատճառով նիստը տեղի չունեցավ

Հեռահար կապի միջոցով գիտական խորհրդի նիստին մասնակցելու համար հարթակին միացել էին 21 անդամներ:

Պարոն Սերոբյանը առաջնորդվելով ՇՈՀ Գիտական խորհրդի կանոնակարգի 4.6-րդ կետով, առաջարկեց 30 րոպե սպասել քվորում ապահովելու համար, սակայն այդ ընթացքում գիտական խորհրդի անդամներից միայն 1-ը միացավ նիստին: Քվորում չլինելու պատճառով նիստը հետաձգվեց ՇՈՀ կանոնադրության 51-րդ կետի համաձայն (Գիտական խորհրդի նիստը համարվում է իրավագործ՝ նրա անդամների 2/3-ի ներկայության դեպքում):

Գիտական խորհրդի նախագահ՝
Գիտական խորհրդի
քարտուղար՝



Ե. ՍԵՐՈԲՅԱՆ



Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ